**Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**«Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ)» ծրագրի վերաբերյալ**

1. **Վարկային համաձայնագրի անվանումը՝** Վերականգնման վարկերի բանկի (KfW) բանկի կողմից ֆինանսավորվող Վարկային և Ծրագրային համաձայնագիր «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I» Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ / ենթակայաններ BMZ ID: 2012 66 949 ՎԱՐԿ: ID՝ 26977 ծրագրի համար

**Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 09.12.2014թ.
**Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 13.03.2015թ.
**Համաձայնագրով նախատեսված գումարը՝** 75 մլն եվրո
**Համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** 1,85 %
**Համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 30.12.2018թ., որը երկարաձգվել է 30.06.2029թ. (հիմք՝ 01.12.2025թ. երկարաձգման վերաբերյալ նամակ)
**Համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝** 30.06.2025թ.-0.12.2029թ.

**1.1. Ենթավարկային համաձայնագրի անվանումը՝** «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I» (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ) ծրագիր

**Ենթավարկային համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 13.03.2015թ.
**Ենթավարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 13.03.2015թ.
**Ենթավարկային համաձայնագրով վերավարկավորման նախատեսված գումարը՝** 75 մլն եվրո
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** 1,85 %
**Ենթավարկային համաձայնագրի փակման ամսաթիվը՝**30.12.2018թ., երկարաձգվել է 30.06.2029թ.
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված ենթավարկի մարման սկիզբը և ավարտը՝** 30.06.2025թ. - 30.12.2029թ.

2. **Վարկային համաձայնագրի անվանումը՝** Վերականգնման վարկերի բանկի (KfW) բանկի կողմից ֆինանսավորվող Վարկային և Ծրագրային համաձայնագիր «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց II» Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ BMZ ID: 2007 66 352 ծրագրի համար

**Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 09.12.2014թ.
**Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 13.03.2015թ.
**Համաձայնագրով նախատեսված գումարը՝** 10,2 մլն եվրո
**Համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** 0,75 %

**Համաձայնագրի փակման ամսաթիվը՝ ՝** 30.12.2018թ., որը երկարաձգվել է 30.12.2029թ. (հիմք՝ 2025թ. նոյեմբեր 27-ի նամակ-համաձայնագիր)
**Համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝**
30.06.2025թ. - 30.12.2054թ.

**2.2. Ենթավարկային համաձայնագրի անվանումը՝** «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I» (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ) ծրագիր

**Ենթավարկային համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 13.03.2015թ.
**Ենթավարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 13.03.2015թ.
**Ենթավարկային համաձայնագրով վերավարկավորման նախատեսված գումարը՝** 10,2 մլն եվրո
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** 0,75 %
**Ենթավարկային համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 30.12.2018թ., երկարաձգվել է 30.12.2029թ.
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված ենթավարկի մարման սկիզբը և ավարտը՝** 30.06.2025թ. - 30.12.2054թ.

3. **Վարկային համաձայնագրի անվանումը՝** Վերականգնման վարկերի բանկի (KfW) բանկի կողմից ֆինանսավորվող Վարկային և Ծրագրային համաձայնագիր «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III» (Ծրագրի Փուլ 2) Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ / ենթակայաններ BMZ ID 2014 68 735 ՎԱՐԿ ID՝ 27523 ծրագրի համար

**Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 11.12.2015թ.
**Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 27.05.2016թ.
**Համաձայնագրով նախատեսված գումարը՝** 83 մլն եվրո
**Համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** 1,80 %
**Համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 30.12.2020թ., որը երկարաձգվել է 30.10.2029թ. (հիմք՝ 03.12.2025թ. երկարաձգման նամակ)
**Համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝**
30.06.2025թ. - 30.12.2030թ.

**3.3. Ենթավարկային համաձայնագրի անվանումը՝** «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III» (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ) ծրագիր (Փուլ 2)

**Ենթավարկային համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 27.05.2016թ.
**Ենթավարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 27.05.2016թ.
**Ենթավարկային համաձայնագրով վերավարկավորման նախատեսված գումարը՝** 83 մլն եվրո
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** 1,80%

**Ենթավարկային համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 30.12.2020թ., երկարաձգվել է 30.10.2029թ.
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված ենթավարկի մարման սկիզբը և ավարտը՝** 30.06.2025թ. - 30.12.2030թ.

4. **Դրամաշնորհային համաձայնագրի անվանումը՝** ԵՄ հանձնաժողովի կողմից (NIF) դրամաշնորհի Ֆինանսավորման և ծրագրի իրականացման համաձայնագիր «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» (Հայաստանի և Վրաստանի միջև հաղորդիչ գիծ և ԲԼՀՀ կայան), Փուլ 1

**Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 30.05.2016թ.
**Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 29.07.2016թ.
**Համաձայնագրով նախատեսված գումարը՝** 10 մլն եվրո
**Համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 29.12.2020թ., որը երկարաձգվել է 30.12.2024թ. (հիմք՝ 11.08.2020թ. ստորագրված մասհանումների և փոխանցումների ժամկետի երկարաձգման Ֆինանսավորման Համաձայնագիրը և 12.01.2021թ. կնքված Հատուկ համաձայնագրի փոփոխությունը), իսկ KfW բանկի 2025թ. հունվարի 13-ի գրության համաձայն երկարաձգվել է 30.12.2029թ. (երկրորդ անգամ),

**4.4. Ենթադրամաշնորհային համաձայնագրի անվանումը՝** «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» (Հայաստանի և Վրաստանի միջև հաղորդիչ գիծ և ԲԼՀՀ կայան), Փուլ 1

**Ենթադրամաշնորհային համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 29.07.2016թ.
**Ենթադրամաշնորհային համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 29.07.2016թ.
**Ենթադրամաշնորհային համաձայնագրով վերավարկավորման նախատեսված գումարը՝** 10 մլն եվրո
**Ենթադրամաշնորհային համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 29.12.2020թ., երկարաձգվել է 30.12.2024թ., որը երկրորդ անգամ երկարաձգվել է 30.12.2029թ.

5. **Վարկային համաձայնագրի անվանումը՝** Եվրոպական ներդրումային բանկի ֆինանսավորմամբ Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց ֆինանսական պայմանագիր
**Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 16.03.2015թ.
**Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 12.03.2016թ.
**Համաձայնագրով նախատեսված գումարը՝** 10 մլն եվրո
**Համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** ԵՎՐԻԲՈՐ- 0,125 % լողացող տոկոսադրույք
**Համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 16.03.2019թ. որը երկարաձգվել է 31.12.2027թ. (հիմք՝ 14.06.2023թ. ստորագրված ֆինանսական պայմանագրի ժամկետի երկարաձգման No. 2 Փոփոխության վերաբերյալ գրությունը):

**5.5. Ենթավարկային համաձայնագրի անվանումը՝** «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I» (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ) ծրագրի (Փուլ 1+Փուլ 2a)

**Ենթավարկային համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 12.03.2016թ.
**Ենթավարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 12.03.2016թ.
**Ենթավարկային համաձայնագրով վերավարկավորման նախատեսված գումարը՝** 10 մլն եվրո
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** ԵՎՐԻԲՈՐԻ - 0,125 % լողացող տոկոսադրույք
**Ենթավարկային համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 16.03.2019թ., երկարաձգվել է 31.12.2027թ.

6. **Դրամաշնորհային համաձայնագրի անվանումը՝** Վերականգնման վարկերի բանկի (KfW) բանկի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհի Ֆինանսավորման համաձայնագիր «Գերմանիայի Դաշնային կառավարության հատուկ 22361 միջոցներից (Studien- und Beratungsfonds) ֆինանսավորվող «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» (ԿԷՑ)»՝ BMZ No. 2007 66 352 ծրագրի շրջանակներում՝ Ստացողին փորձագիտական ծառայություններ տրամադրելու նպատակով:

**Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 15.07.2020թ.
**Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 26.02.2021թ.
**Համաձայնագրով նախատեսված գումարը՝** 550 հազար եվրո
**Համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 30.12.2023թ., որը երկարաձգվել է 31.12.2026թ. (հիմք՝ Ֆինանսավորման Համաձայնագրի մասհանումների և փոխանցումների վերջնաժամկետի երկարաձգման KfW բանկի 2024թ. նոյեմբերի 28-ի գրությունը («Հատկացման երկարաձգված վերջնաժամկետ»):

**6.6. Ենթադրամաշնորհային համաձայնագրի անվանումը՝** «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» ծրագրի շրջանակներում փորձագիտական ծառայություններ մատուցելու համար» ֆինանսավորման համաձայնագիր

**Ենթադրամաշնորհային համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 26.02.2021թ.
**Ենթադրամաշնորհային համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 26.02.2021թ.
**Ենթադրամաշնորհային համաձայնագրով վերավարկավորման նախատեսված գումարը՝** 550 հազար եվրո
**Ենթադրամաշնորհային համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 30.12.2023թ., երկարաձգվել է 31.12.2026թ.

**Ըստ համաձայնագրերի տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրի անվանումը՝** «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I-III» Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ / ենթակայաններ վարկային և դրամաշնորհային ծրագիր Փուլ 1 և 2a

**Ծրագրի նպատակը՝** միացնել հայկական և վրացական էներգահամակարգերը վրացական սահմանին մոտ՝ Այրումում (Հայաստան) տեղակայվող 500/400/220 կՎ բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանով (վերջնական հզորությունը 1050 ՄՎտ): Վրացական կողմից միացումը նախատեսվել է «Մառնեուլի» ենթակայանից 500 կՎ ՕԳ-ի միջոցով, հայկական կողմից՝ Դդմաշենում տեղակայվող 400/220 կՎ ենթակայանից 400 կՎ ՕԳ-ի միջոցով: Արդյունքում Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը նախատեսվել է ներկայիս 200 ՄՎտ-ից առաջին փուլում հասցնել 350 ՄՎտ-ի, հետագայում, ելնելով տարածաշրջանային շուկայի պահանջարկից, հասցնել մինչև 1050 ՄՎտ-ի:

**Ակնկալվող արդյունքները՝** էլեկտրահաղորդման գծի կառուցմամբ զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանի Հյուսիս-Հարավ / ՌԴ – Վրաստան - ՀՀ – ԻԻՀ/ փոխշահավետ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման՝ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկական համակարգի հետ զուգահեռ աշխատանքը կազմակերպելու համար:

**Ծրագրի խորհրդատուի անվանումը՝** Fichtner GmbH & Co KG (Գերմանիա)
**Պայմանագրի անվանումը՝** Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատում (ՇՄՍԱԳ) և խորհրդատվական ծառայություններ «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց»– Փուլ I + II A և օպցիոնալ փուլ II B-ի համար

**Պայմանագրի գումարը՝** 5,155,448.00 եվրո
**Հիմնական պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝** 21.12.2015թ.
**Հիմնական պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 21.12.2015թ.
**Պայմանագրի փոփոխություն N 01-ի ստորագրման ամսաթիվը՝** 17.12.2019թ.
**Պայմանագրի փոփոխություն N 02-ի ստորագրման ամսաթիվը՝** 14.10.2021թ.
**Պայմանագրի փոփոխություն N 03-ի ստորագրման ամսաթիվը՝** 07.09.2022թ.
**Պայմանագրի փոփոխություն N 04-ի ստորագրման ամսաթիվը՝** 28.06.2024թ.
**Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբը և ավարտը՝**
21.12.2015թ. մինչև 2028թ. դեկտեմբերի 31-ը (27.07.2017–17.12.2019թթ. պայմանագիրը եղել է կասեցման մեջ):

Խորհրդատուի հետ կնքված Պայմանագրի Փոփոխություն No. 04-ը 2024թ. ապրիլի 1-ից շարունակվելու է «ժամանակի վրա հիմնված ծառայությունների ծախսերի հաշվարկի և վճարումների» ձևաչափով:

**Ծրագրի Լոտ-2-ի Գլխավոր կապալառուի անվանումը՝** KEC International Limited (Հնդկաստան)

**Պայմանագրի անվանումը՝** Լոտ-2 - Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I-III, Փուլ I +II A, ներքո անցկացվող էլեկտրահաղորդման գծեր, (BMZ ID 2012 66 949, BMZ ID 2007 66 352, BMZ ID 2014 68 735, BMZ ID 2020 61 760, FI No. 84.379 Serapis No. 2014-0374)

**Պայմանագրի գումարը՝** 70,000,000.00 եվրո

**Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝** 06.08.2025թ.

**Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 19.09.2025թ.

**Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբը և ավարտը՝**
19.09.2025թ. մինչև 2029թ. մարտի 19-ը:

**Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները 31.03.2026թ. դրությամբ՝**

**Խորհրդատվական ծառայություններ, այդ թվում՝**

- *Վարկային միջոցների հաշվին - 1,440,165.52 եվրո*
- *Դրամաշնորհային միջոցների հաշվին - 2,015,812.10 եվրո*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 863,994.42 եվրո*

*Ընդամենը – 4,319,972.04 եվրո*

**Ծրագրի շրջանակներում կատարված վճարումները 31.03.2026թ. դրությամբ՝**

**KEC International Limited ընկերությանը մատակարարված սարքեր և սարքավորումների մասով վճարումներ, այդ թվում՝**

- *Վարկային միջոցների հաշվին - 10,676,665.50 եվրո*
- *Դրամաշնորհային միջոցների հաշվին - 0.00 եվրո*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 0.00 եվրո*

*Ընդամենը - 10,676,665.50 եվրո*

**KEC International Limited ընկերությանը շինմոնտաժային աշխատանքների մասով վճարումներ, այդ թվում՝**

- *Վարկային միջոցների հաշվին - 6,823,334.50 եվրո*
- *Դրամաշնորհային միջոցների հաշվին - 0.00 եվրո*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 0.00 եվրո*

*Ընդամենը - 6,823,334.50 եվրո*

**Խորհրդատվական ծառայությունների մասով վճարումներ, այդ թվում՝**

- *Վարկային միջոցների հաշվին - 1,750,155.52 եվրո*
- *Դրամաշնորհային միջոցների հաշվին - 1,601,145.44 եվրո*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 849,793.10 եվրո*

*Ընդամենը – 4,201,094.06 եվրո*

**Ծրագրի ընթացիկ իրավիճակը՝**

Վերականգնման վարկերի (KfW) բանկի (այսուհետ՝ Բանկ) աջակցությամբ իրականացվող «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ)» ծրագրի շրջանակներում (այսուհետ՝ Ծրագիր) իրականացվել են՝

**Լոտ 1-ի և Լոտ 3-ի մասերով.**

2026թ. I եռամսյակում ընթացել են տեխնիկական հայտերի գնահատման աշխատանքներ: «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 2026թ. փետրվարի 23-ին Լոտ 1-ի և 2026թ. մարտի 10-ին Լոտ 3-ի մասով Բանկի հաստատմանն են ներկայացվել Fichtner GmbH & Co.KG խորհրդատվական ընկերության (այսուհետ՝ Խորհրդատու) և Ընկերության աշխատանքային խմբի կողմից համատեղ պատրաստված տեխնիկական հայտերի գնահատման հաշվետվությունները: Բանկի հաստատումներն ստանալուց հետո, Լոտ 1-ի համար 2026թ. մարտի 4-ին և Լոտ 3-ի համար 2026թ. մարտի 17-ին Ընկերության գրասենյակում կայացել են գնումներն իրականացնող մրցութային հանձնաժողովի նիստեր, որտեղ համապատասխան հայտատուների և Խորհրդատուի ներկայացուցիչների մասնակցությամբ բացվել են ֆինանսական հայտերը: Վերջիններիս բացմանը առցանց ձևաչափով հետևել են նաև Խորհրդատուի համապատասխան մասնագետներ և համապատասխան հայտատուների այլ ներկայացուցիչներ: Հայտատուների կողմից ներկայացված ֆինանսական առաջարկները դիտարկելու և դրանց արդյունքները մրցութային հանձնաժողովին ներկայացնելու նպատակով ստեղծվել են աշխատանքային խմբեր: Լոտ 1-ի հայտերի դիտարկման արդյունքում մշակված No.1 պարզաբանման հարցումները Խորհրդատուի կողմից 2026թ. մարտի 31-ին ներկայացվել են համապատասխան հայտատուներին՝ պատասխանի վերջնաժամկետ սահմանելով 2026թ. ապրիլի 03-ը, իսկ Լոտ 3-ի մասով SGCC-CET չինական ընկերության ֆինանսական հայտը դեռևս դիտարկվում է Խորհրդատուի և Ընկերության կողմից ստեղծված աշխատանքային խմբի կողմից:

**Լոտ 2-ի մասով.**

Պայմանագրի շրջանակներում պահանջվող փաստաթղթերը, համատեղ քննարկումների արդյունքում, KEC International Limited (այսուհետ՝ KEC) ընկերության կողմից շարունակաբար լրամշակվել և ներկայացվել են և Ընկերության և Խորհրդատուի հաստատմանը: KEC-ի կողմից կադաստրային քարտեզներով ներկայացված օդային գծի նախնական ծրագիծը, մասնավորապես՝ ծրագծում նշված անկյունային կետերի տեղակայման վայրերը և ձևավորված 400 մետր միջանցքը ներկայացվել են ազդակիր 10 համայնքի՝ վերջիններիս զարգացման պլանների հետ համադրելու նպատակով: Նշված 10 համայնքից ստացված պատասխան գրությունները ուղարկվել են KEC-ին և Խորհրդատուին՝ դրանցից բխող համապատասխան քայլեր իրականացնելու նպատակով: Ընկերության և Խորհրդատուի կողմից դիտարկվում են KEC-ի կողմից ներկայացված նախնական 400 կՎ ծրագծի վերաբերյալ առաջարկվող փոփոխությունները:

KEC-ի կողմից Ընկերության դիտարկմանն են ներկայացվել մատակարարվող մեքենաների տեխնիկական պարամետրերը, վերջիններս ընդունվել են Ընկերության կողմից: KEC-ը պայմանագրով նախատեսված մեքենաները ձեռք է բերելու Հայաստանի Հանրապետության՝ համապատասխան սպասարկող ընկերությունից:

**Խորհրդատվական ծառայությունների մասով.**

Խորհրդատուի կողմից ներկայացվել է Փուլ A-ով և Փուլ B-ով 2025թ. չորրորդ եռամսյակում մատուցված ծառայությունների դիմաց վճարման հաշիվ-ապրանքագրերի նախագիծը: Ներկայացված հաշիվ-ապրանքագրերից ընդունվել են միայն Փուլ B-ով մատուցված ծառայությունները, քանի որ Փուլ A-ով մատուցված ծառայությունների համար նախատեսված գումարը բավարար չի եղել վճարում իրականացնելու համար: Վճարումները կատարելու նպատակով նախատեսվում է կնքել նոր՝ Փոփոխություն No. 05-ը: Վերջինս կնքելուց հետո, սահմանված կարգով, կընդունվեն Փուլ A-ով մատուցված ծառայությունները և կիրականացվեն համապատասխան վճարումները: Ընկերության կողմից ընդունված, Փուլ B-ով մատուցված ծառայությունների դիմաց վճարումը սահմանված կարգով իրականացնելու նպատակով 2026թ. մարտի 31-ին վճարման բնօրինակ փաստաթղթերը սուրհանդակային ծառայության միջոցով ուղարկվել են Բանկ:

Խորհրդատուի կողմից 2026թ. մարտի 26-ին ներկայացվել է Պայմանագրի Փոփոխություն No. 05-ի վերանայված վերջնական տարբերակը, որը, Ընկերության և Խորհրդատուի հետ համատեղ համաձայնեցվելուց հետո, ներկայացվել է Խորհրդատուին՝ Փուլ A-ի ավարտման գնային բացվածքը (Հավելված 1) պատրաստելու նպատակով: Վերջնականացվելուց և Բանկի հաստատումն ստանալուց հետո Փոփոխություն No. 05-ը սահմանված կարգով կներկայացվի ՀՀ ՏԿԵՆ կառավարման խորհրդի համաձայնեցմանն ու հաստատմանը:

Ծրագիրն իրականացվում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից: